ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԳԱԼՍՏՅԱՆ Տ. Ն.

Յուրաքանչյուր պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության արմատները կանխորոշվում են այդ պետության տիրապետող դասակարգերով: Վերջիններս դարձան Իսպանիայում քաղաքացիական պատերազմի հրահրողներ: 1936- 1939 թթ. քաղաքացիական պատերազմը Իսպանիայում նորագույն պատմության կարևորագույն և դարակազմիկ իրադարձություններից է: 1930-ական թթ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր խոր հետքը թողեց նաև Պիրենեյան թերակղզում: Քաղաքացիական պատերազմի նախաշեմին իսպանական տնտեսության առաջատար բոլոր ճյուղերը ֆրանսիական կամ անգլիական ներդրողների վերահսկողության ներքո էին: Օտարերկրյա ներդրողների կապիտալի միայն 60%-ը պատկանում էր Ֆրանսիայի գործարարներին, այսինքն՝ մոտավորապես 600 մլն դոլար: Իսպանիան Ֆրանսիայից ավելի շատ փոխառություն էր ստանում, քան որևէ այլ պետությունից: Բնականաբար, հենց ֆրանսիական բանկերն են առաջինը հիմադրվել Իսպանիայում՝ «Կրեդիտ Լիոն», «Սոսետիե», «Ժեներալ», «Բանկ դը Լյունոն Փարիզիեն»: Իսպանական երկաթուղային ցանցը ևս ֆրանսիացիների ձեռքին էր[1]:

Անգլիական կապիտալը մոտ 200 մլն դոլար էր, որը հավասար էր օտարերկրյա ներդրողների կապիտալի 20%-ին: Անգլիական ներդրումները հիմնականում ուղղված էին լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը: Իսպանիայում գործող ամենակայուն ընկերությունը «Ռիո Տինտոն» էր: Իսպանիայի արտաքին գործերի նախարար Ալվարես դել Վայոն նշում էր, որ ի դեմս «Ռիո Տինտոյի»՝ Իսպանիան վերածվել էր «անգլիական կիսագաղութի»: Գործում էր նաև «անգլիական մեծ հնգյակ» հասկացությունը՝ կապված անգլիական հինգ խոշոր բանկերի հետ: Բանկերի մեջ իր դրամաշրջանառությամբ առանձնանում էր «Բարքլայս բենքը»[2]:

Իսկ ահա Ամերիկայի Միացյալ Նահանգները Իսպանիայի տնտեսություն ներթափանցեց ավելի ուշ: Ամերիկյան ներդրումներն Իսպանիայում տարեկան չէին գերազանցում 4 մլն դոլարը[3]:

Տնտեսության գրեթե բոլոր շահութաբեր և առաջատար ճյուղերը պատկանում էին օտարերկրյա ներդրողներին, ինչը, իհարկե, միայն բացասաբար անդրադարձավ Իսպանիայի վրա: Նման պայմաններում քաղաքացիական պատերազմը հերթական փորձությունն էր Իսպանիայի ազգաբնակչության համար:

---

[1] **Пейермод и Гебар.** *Финансовые интересы Франции, М., 1936, с. 145.*

[2] **Young A. N.** *Spanish Finance and Trade, Madrid, 1941, pp. 138-139.*

[3] *The Economist, 1936, July 25.*

Իսպանիայում սկիզբ էր առել մի հակամարտություն, որն առաջացել էր Երկրորդ իսպանական հանրապետության, նրան սատարող հանրապետական կառույցների և «Իսպանական փաղանգի» միջև: «Փաղանգիստների» զինակիցների թվում էին Գերմանիան, Իտալիան և Պորտուգալիան: Իսպանիայում ծավալված պատերազմը բոլոր եվրոպական պետություններին շատ թե քիչ հետաքրքրում էր: Իր պլաններն իրականացնելու համար Հիտլերը ռազմավարական բազայի կարիք ուներ՝ ի դեմս Պիրենեյան թերակղզու[4]: Եվրոպական գերտերություններից Ֆրանսիան, Անգլիան և ԱՄՆ-ն իրենց շահերի համար ոչ միայն թույլ տվեցին Հիտլերին կիրառել բաց ինտեր-վենցիա, այլև օգնեցին նրան իսպանական հանրապետության նկատմամբ «չեզոքության քաղաքականություն» իրականացնել: Դրա իրագործման համար 1936 թ. օգոստոսին ստեղծվեց հատուկ միջազգային կոմիտե: Կոմիտեն պիտի զբաղվեր բացարձակապես իսպանական խնդիրներին չմիջամտելու հարցերով: Եվրոպական 27 երկրներ, բացի Շվեյցարիայից, հրաժարվեցին զինամթերքով օգնել Իսպանիային: Կոմիտեի անդամ դարձան համաձայնագիրը ստորագրած բոլոր երկրները: Սեպտեմբերի 14-ին կոմիտեի ներսում մի ենթակառուցվածք ստեղծվեց, որ բաղկացած էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Խորհրդային Միության, Գերմանիայի, Իտալիայի, Չեխոսլովակիայի, Բելգիայի, Շվեդիայի և Պորտուգալիայի ներկայացուցիչներից: Այդ ենթակառուցվածքի դերն այն էր, որ կարևորագույն խնդիրների քննարկումը պիտի իրականացվեր ավելի նեղ շրջանակում: Կոմիտեի ստեղծման առաջին իսկ օրվանից Խորհրդա- յին Միության ներկայացուցիչ Ի. Մայսկին դեմ էր արտահայտվում ֆրանկիստներին ռազմական օգնություն ցույց տալու գաղափարին[5]: Խորհրդային կառավարությունն 1939 թ. ապրիլի 1-ին իր ներկայացուցչին հետ կանչեց: Կոմիտեն 1939 թ. ապրիլի 20-ին դադարեց պաշտոնապես գոյություն ունենալ:

Քաղաքացիական պատերազմն Իսպանիայում բարդ քաղաքական, տնտեսական և մշակութային տարաձայնությունների արդյունք էր «երկու Իսպանիաներիս միջև: Երկրում տիրող բազմակուսակցական համակարգը Իսպանիան բաժանել էր երկու մեծ ճամբարների՝ հանրապետական և ֆրանկիստական («փաղանգիստներ»), միևնույն ժամանակ յուրաքանչյուր ճամբար մասնատված էր մի քանի կուսակցությունների[6]: Ամբողջ երկրով մեկ տարբեր կուսակցությունների անդամներ պատերազմեցին իրար դեմ:

Ի վերջո երկրում մի այնպիսի իրադրություն ստեղծվեց, որի հետևանքով իսպանական ժողովրդի մի հատվածը պատրաստ էր իր երկրի ղեկավար տեսնել ցանկացած մարդու, ով կկարողանար վերահսկել երկիրը: Դրանց թվում էին Ֆրանսիսկո Ֆրանկոն, Խոսե Սանխուրխոն և Էմիլիո Վիդալ Մոլան:

---

[4] **Майский И. М.** *Испанские тетради, М., 1962, с. 75.*

[5] *Նույն տեղում, էջ 80:*

[6] **Smith R. M.** *The Days of the Liberals in Spain, Philadelphia, 1938, pp. 42-43.*

Պետք է նշել նաև, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի ամենաուժեղ ֆաշիստական պետությունների՝ Գերմանիայի և Իտալիայի ռազմական պլաններում առաջնակարգ տեղ էր գրավում Պիրենեյան թերակղզին[7]: Գերմանիայում 1933 թ. հունվարին տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք ողջ Եվրոպայի համար ողբերգական հետևանքներով էին հղի: Ա. Հիտլերը հաստատեց իր դիկտատուրան, որի հիմնական նպատակաուղղվածությունը Գերմանիայի համար նոր կենսական տարածքների նվաճումն էր և հետևաբար նոր պատերազմը: Ստեղծվեց նոր կուսակցություն՝ «Իսպանական ֆաշիզմի կուսակցություն» անվամբ: Վերջինիս վերաբերող յուրաքանչյուր փաստաթուղթ ուներ հետևյալ մակագրությունը. “F. E.” (“Fascimo Espanol”): Այս կուսակցությունը հետագայում վերանվանվեց «Իսպանական փաղանգ»: Փաղանգն իր ստեղծման իսկ օրվանից գործում էր որպես իսպանական ծայրահեղական խմբավորման գլխավոր հարվածային ուժ: Նորաստեղծ կուսակցության հիմնաքարն էին հիմնականում հարուստները: Փաղանգի ղեկավար մարմինը վարձատրում և կերակրում էր դրանում ընդգրկված արհեստավորներին, գյուղացիներին, զինվորականներին: Փաղանգը բացահայտորեն հրապարակեց երկրի քաղաքական կյանքին իր մասնակցության մասին[8]:

Իսպանիան, գտնվելով Միջերկրական ծովի և Ատլանտյան օվկիանոսի միջև, կարևոր ռազմավարական նշանակություն ուներ, և պատահական չէ, որ խռովարարներին ահռելի ռազմական օգնություն էին ցուցաբերում Ա. Հիտլերն ու Բ. Մուսոլինին:

Երբ Ա. Հիտլերն ու Բ. Մուսոլինին սկսեցին ավելի լուրջ հետաքրքրվել իսպանական խնդիրներով, փորձեցին նաև Մադրիդում իշխանության գլուխ կանգնեցնել այն կառավարությանը, որն անվերապահորեն կվստահեր նրանց: Պատահական չէր, որ Հռոմում և Բեռլինում օգնություն էին խնդրում նրանք, ովքեր ընդվզում էին իսպանական հանրապետության դեմ: Շուտով խռովարարների առաջնորդ է դառնում գեներալ Ֆրանկոն[9]: Ֆրանկոն 1934 թ. հայտնվում է հանրապետությունում համապատասխան ուժերի շրջթայում՝ կազմելով ամենաուժեղ օղակը: Ֆրանկոն սկզբում նշանակվում է ռազմական նախարար և գլխավոր շտաբի պետ, իսկ հետագայում՝ Մարոկկոյի ընդհանուր զորքերի հրամանատար և ստանում է դիվիզիոնի գեներալի կոչում:

Հարկ է նշել, որ ֆրանկիստներին նշանակալի օգնություն էին

---

[7] **Ramos Olivera.** *History of Spain, Mexico, 1952, p. 21.*

[8] **Ибаррури Д.** *Испанский народ, режим Франко и международная реакция, М., 1964, с. 42.*

[9] *Գեներալ Ֆրանկոն (լրիվ անունը՝ Ֆրանսիսկո Պաուլինո Էրմենեգիլդո Տեուդուլոս Ֆրանկո Բահամոնդե) ծնվել է 1892 թ. դեկտեմբերի 4-ին Իսպանիայի Ֆերոլ քաղաքում: Սկզբում Ֆրանկոն պատրաստվում էր հետևել ընտանեկան ավանդույթին և դառնալ հածանավի վրա աշխատող զինվորական, սակայն ԱՄՆ-ից Իսպանիայի կրած պարտությունից հետո Ֆրանկոն որոշեց սովորել ռազմական ակադեմիայում (տե՛ս* **Васильев М.** *Россия-Испания. Два пика революции между двумя мировыми войнами, М., 1995, с. 69-70):*

ցույց տալիս ոչ միայն գյուղական համայնքները, այլ նաև կաթոլիկ եկեղեցին: Այն կաթոլիկական բարեպաշտությանը անհարիր, ինչպես նաև որպես կաթոլիկ մկրտված, սակայն ձախակողմյան ուժերին հարող իսպանացիներին պիտակավորում էր որպես «Իսպանիայի թշնամիներ»: Քաղաքացիական պատերազմի ընթացքում բեկումնային էր ոչ թե 1936 թվականը, այլ 1937-ի սկիզբը, երբ խռովարարներն սկսեցին վճռական գործողություններ իրականացնել: 1937 թ. մարտի վերջին, երբ Գիպուսկոսի և Ալավանի ուղղությամբ գրոհներ կազմակերպեցին, այդժամ Հյուսիսային ճակատի համար օրհասական պահ էր հասունանում: Գեներալ Մոլան իր վերջնագիրը հրապարակեց, որը մի քանի անգամ հնչեցրին ռադիոյով. «Ես մտադիր չեմ արագ ավարտել Հյուսիսի կռիվը: Բոլոր նրանք, ովքեր զենքը վայր կդնեն, կփրկվեն, իսկ եթե դիմադրության հանդիպենք, ես մտադիր եմ Բիսկայան հողին հավասարեցնել»:

Ֆրանկոն և Մոլան բասկերի դեմ ուղարկեցին 50.000 զինվոր և 150 ինքնաթիռ: Ապրիլից Հյուսիսի համար պատերազմող երկու կողմերն էլ սկսեցին մեծ կորուստներ կրել: Այս կռվում հանրապետականների կորուստներն ահռելի էին՝ 130.000 մարդ զոհվեց, և մոտ 100.000 էլ գերեվարվեցին, որոնց մեծ մասը Սանտանդեր- յան կռվի մասնակից էին: Հյուսիսի հաղթանակից հետո Ֆրանկոյի գլխավորած գեներալիտետն անցավ կառավարության գլուխ: Ռազմական հավասարակշռությունը խախտվեց: 1938 թ. նոյեմբերին, երբ անառիկ էր մնացել միայն Կատալոնիան, գեներալ Ֆրանկոն այս տարածաշրջանի համար հատուկ ռազմական պատրաստություն տեսավ: Ֆրանկոյի գլխավորած գործողությունը իր իսկ կողմից ստացավ «Վակզալ» ծածկագիրը: Գործողությունը պետք է իրականացներ Հիտլերի ուղարկած «Կոնդոր» լեգեոնը, որի կազմում իր գործողություններով աչքի ընկավ “ME-109” ռմբակոծիչը: Թեև ֆրան- կիստները թվական և ռազմական գերակշռություն ունեին հանրապետականների նկատմամբ, այնուամենայնիվ, Պորտուգալիայից Իսպանիա հասավ 2 հածանավ: Կատալոնիան 3 օրվա ավերածություններից հետո ևս անցավ ֆրանկիստների կողմը[10]:

Հյուսիսային ճակատում տարած հաղթանակից հետո ազգայնական «փաղանգի» վարկանիշը բարձրացավ: Բոլոր տերությունները, բացի ԽՍՀՄ-ից, դադարեցին նրանց խռովարար անվանել: Ֆրանկոն 1938 թ. արդեն 26 երկրների հետ միջազգային բարիդրացիական հարաբերություններ էր հաստատել: Ըստ գեներալ Ֆրանկոյի՝ 1938 թ., որը նրան ծանրակշիռ հաղթանակներ բերեց, «ամենածանր» տարին է եղել իր ռազմական կենսագրության մեջ[11]: Պատերազմի վերջին փուլում գեներալ Ֆրանկոյի ձեռքին էր իսպանական հողերի 60%-ը, իսկ նրա ազդեցության տակ էր ազգա- բնակչության մոտ 50%-ը: Ծիրանագույն դրոշը 1939 թ. ապրիլի 1-ին ծածանվում էր ողջ Իսպանիայով մեկ: Իր վերջնական ամփոփագրում հարբուխից նոր առողջացած Ֆրանկոն գրեց. «Պատերազմն ավարտված է»:

[10] **Howson G.** *Arms for Spain, New York, 1988, p. 20.*
[11] **Maurrac,** *Spain and Franko, Madrid, 1943, p. 31.*

Քաղաքացիական պատերազմի հետևանքով զոհվեց 450.000 մարդ[12]: Իսպանիան կորցրեց միջպատերազմյան ազգաբնակչության 5%-ը, տղամարդկանց 10%-ը: Զոհվեց երիտասարդների 20 %-ը (16-30 տարեկան)[13]: Հանրապետականների կողմնակիցներից զոհվեց 320.000 մարդ, ֆրանկիստներից՝ 130.000: Երկրում գրեթե ընտանիք չմնաց, որ պատերազմից տուժած չլիներ: Հիմնովին ավերված էին բոլոր խոշոր քաղաքները, բացի Սևիլիայից և Բիլբաոյից: Ավերվել էին նաև փոքր քաղաքները՝ Գվադալահարան, Տոլեդոն, Խիխոնը և Գեռնիկան[14]: Պատերազմի ավարտից հետո էլեկտրաէներգիա պարզապես չկար: Մինչև անգամ 1940-ականների վերջերին կային գյուղեր, որոնք դեռևս հոսանքազրկված էին: Իսպանիայից այն կողմ էր հայտնվել գրեթե ողջ մտավորականությունը՝ Սալվադորե դե Մադարիագան (իսպանացի պատմաբան, գրող), Խոսե Օրտեգան (փիլիսոփա), աշխարհահռչակ սյուրռեալիստ Պաբլո Պիկասոն: Հայրենիքը, սակայն, չլքեց միայն երիտասարդ նկարիչ Սալվադոր Դալին:

Հանրապետության անկումից հետո (1939 թ.) երկրի սահմանից այն կողմ ձևավորվում էր մի այլ Իսպանիա: Այդ Իսպանիայի մայրաքաղաքներն էին (իհարկե, ոչ պաշտոնական) Թուլուզը՝ Ֆրանսիայում, Մեխիկոն՝ Մեքսիկայում, Բուենոս Այրեսը՝ Արգենտինայում: Ամենից շատ իսպանացի փախստական ընդունեց Մեքսիկան՝ 150.000 մարդ, Ֆրանսիան՝ 140.000 մարդ, Արգենտինան՝ 60.000 մարդ, ԽՍՀՄ-ը՝ 20.000 մարդ, ԱՄՆ-ն՝ 10.000 մարդ: Մեծ Բրիտանիան ընդունեց ընդամենը 200 հոգու[15]: «Մենք մերժում ենք բոլոր կուսակցությունները»,- բացահայտ հայտարարեց Ֆրանկոն[16]: Ծառայողական երդումը կատարվում էր այս կերպ. «Երդվում եմ Աստծով, Իսպանիայով և Ֆրանկոյով»: Հանրապետականների սահմանադրությունն ամբողջովին փոխվեց, հանրապետական «Ռիեգո» հիմնը և եռագույն դրոշը արգելվեցին, «Դրամոնյան օրենքը», որը վերաբերում էր քաղաքական պատասխանատվությանը, մեծ հավանության արժանացավ ոչ միայն ֆրանկիստների, այլ նաև հասարակության լայն շրջանակում[17]:

Մինչև 1941 թ. հանրապետականները զանգվածաբար կախաղան էին բարձրացվում: Միջին հաշվարկով օրական 20 մահապատժի որոշում էր կայացվում: Ավելի քան 200.000 հանրապետականներ դատապարտվեցին: Բանտերում մահանում էին ոչ միայն հակա-

---

[12] **Noel-Barker F.** *Spanish Summary, London, 1948, pp. 52- 53.*

[13] *Casado, Last Days of Madrid, La Coruna, 1939, p. 12.*

[14] *Հյուսիսում 1937 թ. ապրիլի 26-ին հիմնովին կործանվեց մինչ այդ անհայտ Գեռնիկա քաղաքը: 2500 զոհվածների մեջ շատ էին երեխաներն ու կաթոլիկ եկեղեցու սպասավորները: Փոքրիկ քաղաքը մի վայրկյանում դարձավ աշխարհին հայտնի: Շուտով կատալոնցի աշխարհահռչակ նկարիչ Պաբլո Պիկասոն ստեղծեց իր գլուխգործոցը՝ «Գեռնիկա»: Այս կտավում գեներալ Ֆրանկոն պատկերված է որպես առասպելական հրեշ՝ Մինոտավրոս (տե՛ս* **Juan Antonia Ramirez,** *Guernica, ia history a el mizo, Madrid, 1999, p. 49):*

[15] **Preston P.** *A Concise History of the Spanish Civil War, London, 1996, p. 72.*

[16] **McCulagh F.** *In Franco's Spain, London, 1937, p. 25.*

[17] **Ramos Olivera,** *նշվ. աշխ., էջ 29:*

ֆրանկիստները, այլև նրանք, ովքեր կասկածի տեղիք էին տալիս: 300.000-ից ավելի հանրապետականներ ուղարկվեցին հարկադիր աշխատանքի՝ ճանապարհներ ոռոգելու և հանքահորերում աշխատելու: Նրանց աշխատանքի ժամկետը 20 տարի էր: Հատկապես դժվար էր աշխատանքը «Զոհվածների հովտում»: Այստեղ աշխատող 22.000 մարդկանցից 14.000-ը զոհվեցին[18]:

Կիսախարխուլ Իսպանիայում թե՛ քաղաքական վերնախավը, թե՛ ազգաբնակչությունը քաջ գիտակցում էին, որ իրենց երկիրը չի կարող դիմակայել Երկրորդ աշխարհամարտի արհավիրքներին, սակայն Երրորդ ռեյխի հետ բարիդրացիական հարաբերությունները պահպանելու նպատակով գեներալ Ֆրանկոն «Երկնագույն դիվիզիան» ուղարկեց Արևմտյան ռազմաճակատ[19]: Դիվիզիան լուրջ մարտական գործողությունների չմասնակցեց, սակայն կազմը մեծ թվով կրճատվեց հիվանդությունների և ցրտի պատճառով: Այս ամենով հանդերձ՝ Իսպանիայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը լուրջ տեղաշարժեր արձանագրեց իսպանական քաղաքացիական հասարակության ձևավորման, տնտեսության զարգացման և մի շարք այլ բնագավառներում:

Վերջին տարիներին իսպանական կառավարությունը շատ մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիական պատերազմին վերաբերող հարցերին: Այսպես, այդ պատերազմի ընթացքում տարհանվածները կարող են անարգել վերադառնալ իրենց երկիր և օգտվել սահմանված առավելություններից:Քաղաքացիական պատերազմը ոչ միայն Իսպանիայի, այլև համաշխարհային պատմության կարևորագույն էջերից մեկն է, և դրան վերաբերող բազմաթիվ հարցեր համակողմանի ուսումնասիրության կարիք ունեն:

ГРАЖДАНСКАЯ ВОЙНА В ИСПАНИИ И ЕЕ ПОСЛЕДСТВИЯ

ГАЛСТЯН Т. Н.

Резюме

Гражданская война между “Двумя Испаниями” в 1936-1939 гг. (между Вторым Испанским государством и мятежниками, лидером которых стал генерал Франко) явилась результатом глубоких гражданских, экономических и культурных разногласий. Хотя и потери в войне были колоссальными, основы Испанского государства и цивилизованного общества были заложены именно в этот период. Испанская гражданская война привела к серьезным сдвигам в формировании испанского гражданского общества, а также в экономической сфере развития.

[18] **Mitchell M.** *Storm over Spain, London, 1937, p. 81.*
[19] **Goldring D.** *Marching with the Times, London, 1947, p. 42.*